



# ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԲԱՆԱՍՏՐԱԿԱՆ

ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԲԱՆԱՍՏՐԱԿԱՆ  
ՏԵՇԵՍԻԿԵՐԵ ԵՒ ԲՆԵԿԵՐԵ

ԳԻՏԵԼԵԱՑ

Ճ. ՏԱՐԻ ԹԻՒ 20 .

1852

ՀՈԿՏԵՄԲՐԻ 15 .

## ԲԱՐՈՅԱԿԱՆ

Աշխարհա խարերայներով լցուած է :

ԱՏԵՐՈՒՆ բերնէն կը լսուի այս պիսի խօսք մը՝ թէ Շախարհս խաբերայներով լցուած է : Խա այս խօսքս այլ և այլ առիթներու մէջքանի մը անձինքներէ լսելով՝ սկսայ ինքիրենս մտածել . այս խօսքս կընչանակէ՝ թէ մարդկան շատը խաբեթայ են . այսպէս եղածին պէս , յայտնի է որ մարդիկներուն կէսէն շատը խաբեթայ պիտի եղած ըլլան : Խթէ այս խօսքիս հաւտանք , ըսի մնաքէս , ուրեմն մեր ազգին ալ կէսէն շատը խաբեթայ են , ասկից կը հետևի որ այս քաղաքիս մէջ ալ կէսէն աւելին խաբեթայ են : Շայսպէս ինքիրենս մտածելով

բարեկամի մը տուն գացի . մնաքիս մէջէն համրեցի բոլոր տնուողները տասուիրեք հոգի էին , մաքէս ըսի . եթէ մարդկան կէսէն շատը խաբեթայ են , ուրեմն այս տանս մէջ քիչէն քիչ եօմը հոգի խաբեթայ պիտի եղած ըլլան : Խեղեցի մտքովս քննել՝ թէ այս տասուիրեք հոգւոյ մէջէն որո՞նք կրնան սեպուիլ այն խաբեթայներուն կարզը . և չկրցայ ընտրութիւն ընել . որովհետեւ կը ճանչնայի զիրենք որ իրենց վիճակին և կարգին յարմար վարուաղ մարդիկի են : Խա այս բանիս վրայ շատ մը մտածելէն ետեւ , հասկրցայ որ ես ինքիրենս այս խօս-

քիս ճշմարիտ ըլլալը, և թէ որոնք են այն խաբեթայները չկարենամ պիտի գտնել. ուստի ուղեցի ուրիշներուն միտքը հասկընալ, դարձայ այն տանը մէջիններուն հարցուցի՝ թէ ասանկի խօսք մը շատերուն բերանը կը լսուի, դուք ի՞նչ կարծիք ունիք ասոր վրայ : Ամէնքը մէկ բերան սկսան ըսել՝ թէ իրաւ է . աշխարհս խաբեթայներով լցուած է : Այն ատենը հարցուցի . դուք կը ճանչնաք որոնք են այս խաբեթայները : Ո՞ւ թէ իրաւ է . աշխարհս պատասխան տուաւ . ի՞նչպէս կրնայ ճանչցուիլ . եթէ ճանչցուեին՝ այն ատենը խաբեթայ չէին ըսուեր, և ամէնքը կը զգուշանային անսնցմէ :

Պ . Իրաւունք ունիս . բայց եթէ այդպէս է, ուրեմն հիմա ձեր մէջն ալպէտք է որ գտնուին քանի մը խաբեթայներ : — Տ . Ո՞ւնք իրարու վրայ չենք տարակուսիր . մեր գերդաստանին մէջ, փառք լուսուծոյ, այդպիսի անձինք չեն գտնուիր : — Պ . Ես ալ այդպէս կը հաւատամ . բայց դուք շատ ազգականներ և բարեկամներ ունիք, այն գերդաստաններուն վրայ կը կասկածիք որ անոնց մէջ շատեր գտնուին : — Տ . Ո՞ւսուած հետի ընէ . մեր ազգականները և բարեկամները մենք աղեկ կը ճանչնանք, ամէնքն ալ բարի մարդիկ են . մէկերկու երիտասարդական աշխուժով անխոչեմներ կը գտնուին, բայց մենք խաբեթայ և խարդախ մարդկանց հետ բարեկամութիւն չենք ըներ : — Պ . Եթէ այդպէս է, ես ձեզի կը հաւաստեմ որ աշխարհս մէջ ամեննեին խաբեթայ մարդ չկայ :

Այս խօսքիս վրայ սկսան ըսել՝ թէ ի՞նչպէս կարելի բան է . չես տեսներ թէ հիմայ այդ խաբեթայներուն ձեռքով աշխարհս ի՞նչ խուզովութիւններուն մէջ ընկած է . կը լսենք՝ թէ, յարոպայի մէջ անհաւատութիւնը և անկարգութիւնը շատցեր է . խաբեթայները չեն մի այդ բանները ընսղները . ահա մեր ազգին մէջն ալ չես տեսներ թէ ի՞նչպէս լցուեր են խաբեթայ մարդիկ, ի՞նչ խուզովութիւններ կը հանեն, ի՞նչպէս իրարու տուն կործաննելու կը ջանան : — Պ . Հապա դուք

ի՞նչպէս կը հաստատեք՝ թէ ձեր ազգականներուն և բարեկամներուն մէջ խաբեթայ մարդ չկայ : — Տ . Ո՞ւսն զի մենք փորձով գիտենք : — Պ . Ես ձեզի կը հաւատամ . բայց տեսէք՝ թէ ձեր այս խօսքէն ես ի՞նչ կը հետեւցնեմ : Հիմայ ես երթամ ձեր բարեկամներէն կամ ազգականներէն մէկուն տունը, ու ի՞նչ որ ձեզի հարցուցի անսնց ալ հարցնեմ . յայտնի է որ անոնք ալ ձեզի պէս պատասխան պիտի տան, ասոր վրայ չէք տարակուիր : — Տ . մենք գիտենք որ անոնք ալ խաբեթայ խարդախ մարդկանց հետ գործք չունին : — Պ . Ես ալ այդպէս կը կարծեմ . բայց այս ալ գիտնաք որ անոնք ալ իրենց ուրիշ ազգականաց և բարեկամաց վրայ նոյնպէս կը վկայեն : — Տ . Ո՞յդ խօսքդ ալ իրաւ է : — Պ . Ուրեմն եթէ այսպէս ամենուն խօսքին հաւատալու ըլլանք, բոլոր այս քաղաքիս մէջ խարդախ և խաբեթայ մարդ մը չգտնուիր : — Տ . Ո՞յդ իրաւ է՝ թէ ամէնքն ալ այնպէս կ'ըսեն, բայց տեսնենք թէ ամենուն ըսածն ալ շիտակ է : — Պ . Ի՞նչպէս դուք զձեզ կը ճանչնաք, և ձեր ազգականաց վրայ կը վկայեք, այսպէս ձեր ազգականներն ալ իրենք զիրենք կը ճանչնան և իրենց ուրիշ ազգականաց վրայ կը վկայեն, նոյնպէս անոնք ալ իրենցներուն վրայ այսպէս հետ զհետէ : Ուրեմն դուք ի՞նչ իրաւունքով որ կ'ուզէք՝ թէ ուրիշները ձեզի հաւատան, ու դուք ուրիշներուն վրայ ծուռ կարծիք ունենաք, ուրիշներն ալ նոյն իրաւամբք կ'ուզէն որ դուք իրենց հաւատաք, ու անոնք զձեզ կը դատեն : — Տ . Ո՞յդ խօսքդ ալ շիտակ է : — Պ . Ուրեմն ի՞նչպէս որ դուք խաբեթայ չէք, և ուրիշները զձեզ իշխեթայ կը կարծեն, նոյնպէս ալ պէտք է ըսենք՝ թէ ուրիշները խաբեթայ չեն, ու դուք զանոնք խաբեթայ կը կարծիք : Ուկից կը հետեւի՝ թէ սուտ է այս խօսք Ո՞շխարհս խաբեթայներով լցուած է : — Տ . Ո՞յդ խօսքդ սուտ չկրնար ըլլալը որովհետեւ զաշխարհս տակն ու վրայ ընողները խաբեթայ մարդիկն են : — Պ . Եթէ այդպէս է՝ կը դառնանք դար-

ձեալ առաջին խօսքերնուս, թէ ուրեմն հիմայ այս տանս մէջն ալ շատերնիդ խաբեթայ էք : — Տ . Ա . զայդ չենք ընդունիր : — Պ . ‘ Իտք այսչափ հոգի էք ու չեք ընդունիր ’ թէ ձեր մէջը խաբեթայներ կան . և կ’ ընդունիք զայս ալ թէ ուրիշներն ալ ձեզի պէս կը մտածեն . ու ետքը կը դառնաք կ’ ըսէք ’ թէ աշխարհս խաբեթայներով լեցուն է : Ա . յա երկու ներհակ խօսքեր բնչալէս կը միաբանին : Ո՞ր տուն որ երթաս, որ և իցէ ընկերութեան մէջ մտնես, ամէնքն ալ մէկ բերան այսպէս կը վկայէն : Ուրեմն այդ անթիւ բազմութիւնը խաբեթայից ուր ծածկուած էն : Ա , թէ իրօք աշխարհս խաբեթայներով լցուած է, ուրեմն ամէն գերդաստանի մէջ պիտի գտնուին, և որովհետեւ զայդ չեք ընդունիր, ապա հաւաստի է՝ թէ այդ խօսքը անմտադրութեամբ ըսուած է և տուտ է, և անոր համար կրնանք ըսել՝ թէ այդ խօսքդ և այդ ծուռ կարծիքդ է պատճառ ամէն տեսակ խոռովութեց : Ամէն մարդ միտքը դրած՝ թէ աշխարհս խաբեթայներով լցուած է, և զգիտնալվ թէ ուր են այդ խաբեթայները, սովորութիւն ըրեր են իրենց ջնանցած մարդկանց վրայ կարծիքի երթալու թէ խաբեթայ են : Ասով ըսել չեմուզեր՝ թէ աշխարհիս մէջ խաբեթայ մարդ չկայ . կան խաբեթայներ, բայց քիչ են : Ա , ամէնքը իրենց ճանչուորներուն մէջ մէկ երկու հոգի կրնան ցուցընել . քանի մըն ալ կ’ ըլլան որ չեն ճանչցուիր, իրենք զիւրենք շիտակ մարդ ձեւացընելով : Ասկից կը հետեւի՝ որ մէկը չկրնար ըսել՝ թէ իմ ճանչուորներուս բարեկամներուս մէջ չկան, այլ միայն օտարներուն մէջ : Ա ամս զի ինչպէս որ օտարները իրաւունք չունինք քու առջեւդ այդ խօսքդ ըսելու, դու ալ նոյնպէս իրաւունք չունիս օտարներուն ըսելու : Հ իտակ խօսքն այն է՝ թէ ամէն տեղ կրնան գտնուիլ, որոնցմով աշխարհս կը խոռովի :

Հոս մէկ մեծ տարակոյս կ’ ելլէ . եթէ այսպէս քիչուոր են խաբեթայները, հապա բնչալէս աշխարհս տակնուլիսայ կ’ ըլլայ մէկ քանի խաբեթայներու ձեռ-

քով . ահա այս տարիներս բոլոր Աւրոպայի մէջ եղած խոռովութիւնները քանի մը հոգւոյ գործք չեն . և ինչուան հիմայ ալ կ’ ըսէն՝ թէ ծածուկ խառնութեան ետեւէ եղողներ շատ կան : Ա . յա միջոցիս մեր աղջին մէջ ալ հանդիպած խոռովութիւնները քիչ բան չեն . իրաւ իրար չեն մեռցներ արիւն լինելով, բայց շատ հոգւոյ մահէր կ’ ըլլան, որ մարմնոյ մահէն ալ հազար անդամ գէշէ : — Խոռովութիւն հանելու համար հարկ չկայ որ շատ մարդիկ խաբեթայ ըլլան, խաբուած ըլլան ալ բաւական է . մէկ խաբեթայ մարդ մը կրնայ երկու գերդաստաններուն մէջ ձգել, զանոնք իրարու ացքին խարդախ և խաբեթայ երեցընելով . այնպէս որ կը կարծուի՝ թէ այս երկու գերդաստաններուն մէջ լեցուն խարդախ և խաբեթայ մարդիկ կան : Աւտի շիտակ խօսել ուզելով պէտք է ըսել՝ թէ Աշխարհս խաբուածներով լեցուն է, չէ թէ խաբեթայներով : Աւրոտային խոռովութիւններն իրենց թողլով մենք մերինը մտածենք . հիմա գրեթէ հայ կաթոլիկ աղջը երկուք բաժնուած իրար կ’ ատեն, և իրարու դէմելած՝ կը ջանան մնացերնին դրածն առաջտանիլ, կարծելով թէ հակառակ կողմինները խարդախ և խաբեթայ են : Անչպէս հաւտալու բան է՝ թէ այնչափ գերդաստաններ ամէնքը մէկ տեղ խաբեթայ մարդիկ ըլլան . յայտնի է որ խաբուած էն : Աւրեմն որպէս զի ամէն մարդ իր խաբուած ըլլալը գիտնայ, պէտք է որ ասկից ետեւ այս զուրցուածքը փոխենք ու ըսենք աշխարհս խաբուածներով լցուած է : Աւ այս ըսելին ետեւ պէտք է որ ամէնքը ջանան որ խաբուած չմնան : Աւ մէկ կողմանէ ալ ամենքնիս փառք տանք Աստուծոյ՝ որ այս սովորական առանց ձգելու ռամկական զուրցուածքին իմաստը սուտ է եղեր . մեր սխալ կարծեացը պէս աղջերնիս խաբեթայ չեն եղեր : Ա ամս զի յիրաւի եթէ աղջերնուս մէջ շատ խաբեթայներ գտնուեին, ամենեին յոյս չեր ըլլար մեզի աղէկութեան մը հանդիպելու : Այց շատ խաբուածներ գտնուիլը մէկ մեծ վնաս մը չէ . որով

Հետեւ որքափ որ գժուարին է խաբեբայ մարդը ուղղութեան ձամբան բերելը՝ ըստեմ [թէ անհնարին, ասոր ներհակ՝ այնչափ դիւրին է խաբուած մարդուն շիտակն հասկրցընելը . վասն զի խաբեբայն գիտնալով մոքի զբած չարութիւնը կ'ուզէ առաջ տանիլ, իսկ խաբուածը կ'ուզէ շիտակն իմանալ: Խաբեբայն դարձընելու համար անոր սիրտը պէտք է փոխել, որ է անկարելի բնական ձամբով, առանց մասնաւոր հրաշքի . իսկ խաբուածը դարձընելու համար հանդարտ պատճառով խօսակցութիւն մը բաւական է: Խաբեբայն կը ձանձնայ իր ինչ ըլլալը ու խաբեբայութենէն ետ կենալը իրեն ամօթ կը սեպէ . բայց խաբուած մարդը չգիտեր, և եթէ իմանայ, իրեն ամօթ կը սեպէ խաբուած մնալը: Ուստի հիմայ որ իմացանք՝ [թէ ազգերնուս մէջ շատերը խաբեբայ չեն, այլ խաբուած են, և այն խաբուածութիւնն է միայն պատճառ ամէն տեսակ խուզութեան, և արգելք ազգերնուս ծաղկելուն, ուրեմն ամէնքնիս պէտք է ջանանք ձանձնալու որ բաներուն մէջ խաբուած ըլլալիս, և ձանձնածնիս իրարու ալ հասկրցընելու: Խախ և առաջ այս սուտ խօսքը պէտք է փոխենք, իմանալով [թէ այս խաբուած մարդկանց խօսք է. ուստի ասկից ետեւ պէտք է ըսենք. Աշխարհս խաբուածներովլցուած է. և պէտք է ջանանք ամենուն ալ հասկրցընելու զայս շշմարտութիւնը: Խւ հիմա մէկը չկարծէ՝ [թէ այս անվասա պզտի միալ մըն է, որուն մէջ ինքն ալ խաբուած էր. այլ այս հիմն է ուրիշ ամէն խաբուելովլը ըրած մարդկանց գործոյը . անանկ որ՝ միայն այս սուտ կարծիքէն ազատողը կրնայ խիստ դիւրաւ ազատիլ ուրիշ ամէն իրեն խաբուած կարծիքներէն: Այս բանիս բացարութիւնը ինձ ալ ձեզ ալ հարկաւոր է:

Ինչուան այսօր ես ալ դուք ալ այն պէս մոքերնիս դրեր էինք [թէ աշխարհս խաբեբայներովլ լցուած է, և ամէնքնիս ալ այսպիսի սուտ կարծեօք խաբուած էինք: Այց երբոր հարցուցի [թէ մէ-

ջերնիդ քանի խաբեբայ մարդ կայ, պատասխան տուիք՝ [թէ և ոչ մէկ մը: Այս պատասխաննիդ մոքերնիս արթընցուց: Խակ եթէ հիմա հարցընեմ՝ [թէ մէջերնիդ քանի խաբուած մարդ կայ . յայտնի է որ պիտի պատասխանէք [թէ ամենքնիս ալ խաբուած էինք այս սուտ կարծիքիս մէջ, ես ալ ձեզի հետ մէկ տեղ: Տես ուրեմն [թէ ինչպէս ձշմարիտ է այս խօսքս՝ Աշխարհս խաբուածներովլ լցուած է: Խւ յայտնի է որ ամէն ուրիշ գերդաստաններ ալ երբ հասկրնան զայս խօսածնիս պատճառներովլ, ամէնքն ալ պիտի ըսեն՝ [թէ մենք ալ խաբուած էինք: Խւ հիմա մենք կրնանք ըսել [թէ խաբուածութեան այս մասը մենք ամենքնիս մըտք ամենքնիս մը: Նոյնպէս ուրիշ ամէն մարդկանց համար ալ այսպէս կը նանք հաւաստել, եթէ անոնք ալ լսեն ու հասկրնան, անոնք ալ այս իրենց խաբուած կարծիքէն պիտի ազատին: Հիմա կը մնայ ուրիշ խաբուած կարծիքներ, որոնք որ այս առջի կարծեաց հետեւանքներն են, և անոնք են բուն խուզութեան պատճառները: Խա կը յուսամ՝ [թէ ինչպէս որ դիւրաւ այս սուտ կարծիքէն ազատեցնք, աւելի դիւրաւ պիտի ազատինք ուրիշ խուզութիւն պատճառող խաբուած կարծիքներէն: ( Օրինակով մը բացատրեմ. մէկ ծառի մը պտուղ տուողը իր ձիւղերն են, իսկ ծառին արմատը հեռուն հողուն տակը ծածկուած, կարծես թէ պարապ, անպիտան թաղուած խոփիներ են . բայց եթէ ծառին տակէն զանոնք փրցընես, ծառին ամէն գետնէն խիստ հեռու ձիւղերն ալ իրենց պտուղներովլ կ'անազիտանանան կը չորնան: Այս պէս ահա մարդկանց ամէն խաբուած կարծիքները այս ընդհանուր կարծիքէն առաջ կուգան ու կը զօրանան . և այս կարծիքն որ ջնջուի, մէկալ ամէն խաբուած կարծիքներն ալ կը յայտնուին կ'ոչնչանան :

( Մասնաւու ուրիշ սահմա )